Գ

ԳԱԲՐԻԷԼ ԱԲ. Մբ.—Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցիին մարմարեայ բեմը շինել տուած է իր անձնական ծախքով, 1690ին։

ԳԱԲՐԻԷԼ ԱԲ. ԳՈՂԹԱՆՑԻ.—Ռճխդ (=1695) թուին, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և Ռամլէի մէջ կը գրէ այս յիշատակարանը (ՄՁ. թ. 23) «ես նուաստ հոգի Գաբրիէլ յաբեղա, ի գիւղաքաղաքէն Դիւու, որ է Գողթան գաւառ եկի ի Ռամլա Ռճխդ (1695) թվին և հանդիպեցայ ի սբ. Հարանց վարս որ է գանձարան և խրատիչ ամենայնի» (Խաչ. Ցուց. էջ 112)։

ԳԱԲՐԻԷԼ ԱՐԲԵՊ. ԽՈՒԶՈՒՉԱՆՑԻ, (Տէրսիմ) Մբ.—Փոխանորդ, վախճանած է 1782ին և թաղուած է Ս. Փրկչի վանքը, իր տապանագիրը հետեւեալն է.

«Այս է տապան հանգստեան
Սրբոյ աթոռոյս միաբան
Եւ վեհիզ Խուզուչանցի Գաբրիէլ
Արհի եպիսկոպոսին որ հանգեաւ
Ի ՌՄԼԱ (=1782) թուին ընթերցողք
Տուք զողորմին»։

ԳԱԲՐԻԷԼ ԵՊՍ. Մբ.—Նախ՝ Նւ. Ս. Յակոբի վանքին Պրուսայի համար և ապա Առ. Պրուսայի (1741-1751), վախճանած է Պրուսայի մէջ 1751ին, (Երեւակ 1859 էջ 231-232). ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքին կ'այցելէ 1749ին։

ԳԱԲՐԻԷԼ ԵՊՍ. ՃԷՎԱՅԻՐՃԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ, Մբ.—Ծ. 1850, աշակերտ Ֆրէրներու դպրոցին Եգիպտոսի մէջ, ուր կը ընակէր. 1868ին, սրկ. կը ձեռնադրուի Ս. Յակոբի մէջ, 1871ին կը մեկնի Եգիպտոս, Զռ. 1875ին, կը վերադառնայ Ս. Յակոբ 1880ին և պաշտօնով կը մնայ Տարտանէլ 1886-88, կ'ուղեւորի Պոլիս և կը կարգուի պտրգին. Փոխ. Կ. Պոլսի (1892-1908), կը ձեռնադրուի եպս. 1896ին, Տեղապահ Պոլսի, 1913ին. կթղ. և Պե. փոխ. Պոլսի (1916-1918)։ Զինադադարին՝ կը հրաժարի, կը վախճանի